

ԱՄՍԷ-ԱՄԻՍ

ՄՐԱՆՍԱ

ՓԱՐԻՉԻ ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՈՒ-
ԹԻՒՆԸ յիշատակի հանդէս մը կազմա-
կերպեց զեկտեմբեր 15-ին, Տօքթ.
Նահապետ Թուսինեանի մահուան յի-
նամեակին առթիւ, նախադահուութեամբ
Գ. Գ. Նորասուենկեանի:

Տօքթ. Վ. Թորղոմեան մանրամաս-
նորէն ներկայացուց Տօքթ. Թուսինեանի
կեանքն ու գործունէութիւնը, հետա-
քրքիր գրուածքներ յիշելով և պատկերա-
ցուց անոր ազրած մամանկամէջոցը,
որ թրքահայ վերածնունդի ամենէն
բնորոշ շրջանը կ'ըլլաւ Գր. Օսեանով,
Հ. Պալեանով, Տօքթ. Աէրվիշէնով, և
1880-ի Ազգ. Սահմանադրութեան ամ-
բողջ սերունդով:

Գ. Կ. Բասմաջեան քննադատեց
Թուսինեանի ճշայն Ուղղախօսութիւնը:
Տօքթ. Քալուեան, յանուն Բժշկ. Միու-
թեան պարզելէ վերջ հանդէսին նպա-
տակը, շնորհակալութիւն յայտնեց այդ
նպատակը ըմբռնողներուն: Գ. Գ. Նորա-
սուենկեան վերջունեց Ն. Թուսինեանի
կեանքը և դասեր հանեց անկէ:

Յարգանքի ուղերձներ զրկած էին
Փաղոպայի բժշկ. վարժարանի հայ
ուսանողները, Մինաս Զերազ, Ա. Սա-
բուխան և Ռ. Որբերեան: Յոսովայա
կարդացուեցաւ Ստեփան փաշա Արսլանի
դամբանական ճառը խօսուած Ազգ.
Երեսփ. Ժողովին մէջ, Թուսինեանի
մահուան առթիւ:

ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱՂԻՆՄԻԱՆ ինչպէս
նաև համալսարանը անեցին Փրանսացի
բժիշկ Լաէնէքի մահուան հարիւրամեա-
կը (1826 — 1926): Լաէնէք զտած է
լանջողէտը (stethoscope) և անոր
միջոցով կուրծքը քննելու մեթոտը

(auscultation médiate), որու

շնորհիւ այսօր բժիշկները ի վիճակի են
կուրծքի ձայներու փոփոխութիւններուն
վրայ հիմնուելով, փոխորոշել սրտի,
թոքերու և այլ հիւանդութիւնները:
Հարիւրամեակին առթիւ Հայ Բժշկ.
Միութեան կողմէ ուղերձ մը ներկա-
յացուեցաւ Սորպոնի հանդէսին: Ուղերձը
կը ներկայացնէ Աբրահամը, ուրկէ հրեշ-
տակ մը դափնեպսակ մը կը զնէ
Լաէնէքի զլխին:

Լաէնէքի պատկերը հայ նարտար
վրձինի մը արդիւնքն է:

ՄԱՂԿԱՑՏԻ փոքր համանարակը որ
բուսական զոհեր ըրաւ վերջերս, զրեթէ
անհետացած է: Փոխարէն կրիրի (էն-
ֆլիւէնցա) բուսական լուրջ համանարակ
մը ծայր տուած է: Գրեթէ ամէն տան
մէջ մէկ — երկու հիւանդ անպակաս են:

ԼԱԷՆԷՔԻ ՀԱՐԻՒՐԱՄԵՆԱԿԻՆ առթիւ
թոքախախտ զէմ պայքարող Ֆրանսական
Ազգային Ընկերակցութիւնը, Լաէնէքի
զէմքը ներկայացնող 10 սանդղիմնոց
դրոշմաթղթեր (timbre antitubercu-
leux) հրատարակ հանած է: Հասոյթը
պիտի յատկացուի թոքախտաւորներու
հաստատութեանց: Այս դրոշմաթղթի
դադափարը 1904-ին յղացած է տասը-
մարգցի թղթատարական պաշտօնեայ մը
այժմ ընդհ. տնօրէն: Էնար Հօլպօլ:

Այդ թուականէն ի վեր, շնորհիւ
հակաթոքախտային դրոշմաթղթին, Տա-
նըմարքայի կառավարութիւնը մօտ
տասը միլիոն Ֆրանք հաւաքած է:
Հետզհետէ Եռւէտը, Նորվեկիան, Զուի-
ցերիան, Ռուսիան, Ճարմը, Անգլիան,
Ամերիկան և վերջերս ալ Ֆրանսան մեծ
յաջողութեամբ և արդիւնքով Տանըմար-
քայի օրինակին հետեւեցան: Ամերիկայի

ձէլ, այդ գրուածաթղթի (Christmas Seal) վաճառուձէն ստացուած հասոյթով ձինչև հիճա կարելի եղած է շինել 700 սանաթորիւմ, 6000 բացօդեայ դըպրոցներ թոքախտի ենթակայ մանուկներու համար և պարտաստել 12000 հիւանդապահուհի: Արդիւնքը այն եղած է որ թոքախտէ մեռնողներու թիւը 198-էն (100.000 հոգիի վրայ) 95-ի իջած է:

ՆԱԿԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԿԱՅԱԳԻՐԸ պարտադիր դարձնելու նպատակով, քանի մը երեսփոխաններ, որոնց ձէլ աշխարհաւոչակ մանկարարձրբօք. Բիւտա, օրինադիմ մը ներկայացուցին Փրանս. երեսփոխանական ժողովին:

ԲՈՒՍԱՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՆ մը կազմուած է Փարիզի ձէլ, որու նպատակն է, նուազագոյն 10 Փր. անդամաձճարի փոխարէն, օգնել իր անդամներուն հիւանդութեան, դժբախտ արկածներու և ծննդարերութեան ատեն, նպատաներ փոխ տալով և աջակցելով անոնց ստանալու համար մրի բժշկութիւն և դեղեր: — Ահաւասիկ իրերօգնութեան զողելի մեռնարկ մը, որ ամէն քաղաքներէ արժանի է և որի սկզբունքը պէտք է մուս գործէ մեր զանազան աղքատախնամ և նպատաբալի ընկերութիւններու ձէլ, վերածելով զանոնք իրերօգնութեան ընկերակցութիւններու (Société de Secours mutuels).

ՀԱՅԱՍՏՆ

ՀՐԻԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԱՂԱԲԱՄԱՍԻՆ ձէլ աւարտած է բէսթիկէնեան հաստատութեան ձէկ յարկանի շէնքը,

որ եկող տարի պիտի կահուարուի և աշխատութեան սկսի: Սկսած է նաև կեդրոնական խոհանոցի կառուցումը, որուն նախադիմը կազմուած է թեքնիքի և առողջապահութեան վերջին տուեալներու համամայն: Կենդրոնական խոհանոցը սնունդ պիտի մատակարարէ քաղաքամասի բոլոր ժլինիքներուն և զգալի շտափով պիտի նուազեցնէ հիւանդանոցներու սնունդի համար եղած ծախքը: Հիւանդանոցային քաղաքամասին ձէլ կը կառուցուի նաև կանանց հիւանդութեանց յատուկ հաստատութիւն մը: Այդ քաղաքամասին ձէլ պիտի ըլլան բժշկական համալսարանի ժլինիքները:

ԲՈՐՈՏՈՒԹԻՒՆԸ զոր պէտք է շփոթել հասարակ ջորին հեա (gale) զգալապէս աւելցած է Հայաստանի ձէլ: Այս դրեթէ անրուսելի հիւանդութիւնը դարցի երկիրներէն անցած է Հայկական դաւանները: Դարալազեաղը ամենէն աւելի կը տառապի անկէ: Ժողովրդեան նախապաշարունմները պատճառ դարձած են, որ ախար ծանր համեմատութիւններ ստանայ:

ՉԱՆԱՉԱՆ

ՄԱՄԵԼԹԵՅԻՒՆ (Լիբանան), Հայ Թոքախտաւորներու Հիւանդանոցին ձէլ 1925 - 1926 տարուայ ընթացքին խրամուած են 105 հիւանդներ, որոնց 11-ը առողջացած են, 50-ը մեռած, 20-ը հեռացած, 24-ը դեռ կը դարձանուին: Հիւանդանոցի բացումէն ի վեր, 1 Յուլիս 1923, ձինչև ներկայ տարուայ Յուլիս 1-ը երկարող երեք տարիներու ընթացքին ընդունուած են 227 հիւանդներ: